

տուչութեան¹. այնր ազապու թերևս և Անյաղթ կոչեցաւ 'ի հնումն . և զարձեալ 'ի հայրենիս' բնակէ յանապատս ըստ ասելոյ Ներսիսի շնորհալոյ² : Եւ վասն անյայտ ինչ մեզ չքնադ կրօնիցն պատուեցաւ յիշատակ նորա և շիրիմ :

Եւ զի³ մի մի թուիցեմ զայլ ևս փոքր 'ի շատէ ծանօթս վարուք, և կամ զանծանօթան զԸնծակ, Արժևան կամ Արզեւան³, Ղազրիկ, Եզրատ անգեղացի, Թէոփորոս քերթող և զայլս, որք 'ի զադտնութեան անդ առաւել հրապուրելիք են մտաց և ուշոյ :

Եւ 'ի մի բան, ամենեքեան անզուգականք

են, հրաշակերտք ձեռին բարձրելոյ : Վասն այտորիկ իսամբարձ եկեղեցի պցանկայի նշխարս նոցա 'ի սեղանս իւր' յերկրպագութիւն հաւատացեցնոց. նշխարք, որ իբրև զծաղկունս հաւաքեցան 'ի բերանոյ սայրատուր երկաթի, կամ 'ի շղթայից զնզանաց, և կամ 'ի ձեռանէ անզութ և կտտիչ բախտին :

Թող և սիրտք մեր լիցին մի մի սեղանք՝ շուրջ պատեալք 'ի բոլորս անուշակ և շնորհապարտ ըղձից՝ իբրու ծխովք խնկոց, յորս հանգիցէ յաւէժաբար անմահ և պաշտելի նոցին յիշատակ :

Հ . Վ . Սումուհանան

ԱՌ ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏՆ

ՎԱՍԻԼ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Գրեալ ի տուն, իմ բարեկամ Պ . Միխիքիաշայեանցի)



Հոգիդ վըսեմ, աչքերդ կոյր,

Կեանքըդ ի՛ մութ սեւաթոյր .

Երգեր ունիմ սրտիդ ըտր,

Այլ արուեստդ է երկնից քոյր :

Լաւ է, աշխարհս չի տեսնես,

Դա ցաւոց է ասպարէզ .

Հոգւովդ երկնք թէ ելլես,

Պէտք է զայմ մեզ ուշարկես :

Բազումք չունիմ այն լեզու,

Այնքան ամոռ խօսելու,

Որքան ծայր քոյ մատներու,

Մեր սրտերում ազդելու :

Օ՛ն դու մեզ հետ մնացիր միշտ,

Ո՛վ երկնայինդ երաժիշտ,

Որոյ մաշակմ տաս մեզ միշտ,

Խոյս տամ քեմէ ցաւմ ու վիշտ :

31 Գեկտեմբեր 1879

Պ . Հ . ԱՒԱՄԵԱՆ



1. Թող զյուրով սրեք ընդվայրախօսութիւն զԴաւթայ և զՄովսէսէ :

2. Ի պատճառի Բարձրացուցեացն :

3. Յերկուց օրինակաց օրհնութիւնարք ցուցակին 'ի միումն զնի մին յանուանցդ և 'ի միւսումն երկրորդն 'ի նմին տեղով . յորմէ չմարթէ զհտել՝ երկու անձինք իցեն եթէ մի՛ այլ և այլ կոչամբք :